ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

(գիտական աշխատանքների ժողովածու)

## 8-9/2011 թ. (168-169)

СОЮЗ СТРОИТЕЛЕЙ АРМЕНИИ

ИЗВЕСТИЯ

BUILDERS' UNION OF ARMENIA

BULLETIN

ԵՐԵՎԱՆ 2011

**Հայաստանի շինարարների միության տեղեկագիր**

**Известия Союза Строителей Армении**

**Bulletin Builders Union of Armenia**

**Խմբագրական կազմ**

Յուրի Սաֆարյան (գլխ. խմբագիր) ճարտ. դոկտոր, Գագիկ Գալստյան (ՀՇՄ նախագահ) տեխն. գիտ. թեկնածու, Սկրտիչ Մինասյան (ՀՃՄ նախագահ), Գուրգեն Մինասյան (պատասխանատու քարտուղար), Պարգև Բալջյան՝ տեխն. գիտ. դոկտոր, Արեստ Բեգլարյան՝ տեխն. գիտ. դոկտոր, Սարգիս Թովմասյան՝ ճարտ. թեկնածու, Վլադիմիր Համբարձումյան՝ տեխն. գիտ. դոկտոր, Աշոտ Մարկոսյան՝ տնտ. գիտ. դոկտոր:

**Редакционный совет**

Юрий Сафарян (главный редактор), доктор архитектуры, Гагик Галстян (председатель ССА), канд. техн. наук, Мкртич Минасян (председатель САА), Гурген Минасян (ответственный секретарь), Паргев Балджян доктор техн. наук, Арест Бегларян доктор техн. наук, Саргис Товмасян канд. архитектуры, Владимир Амбарцумян доктор техн. наук, Ашот Маркосян доктор эконом. наук.

**Editorial council**

Yuri Safaryan (editor-in-chief) doctor of architecture, Gagik Galstyan (president of Builders Union of Armenia) candidate of technical science, Mkrtich Minasyan (president of Architectures Union of Armenia), Gurgen Minasyan (executive secretary), Pargev Baldgyan doctor of technical science, Arest Beglaryan doctor of technical science, Sargis Tovmasyan candidate of architecture, Vladimir Hambardzumyan doctor of technical science, Ashot Marcosyan doctor of economic science.

Տեղեկագիրը երաշխավորված է տպագրության Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի գիտական խորհրդի կողմից

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

**Ընդունված է 2011 թվականի հունիսի 23-ին**

**«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 19-րդ հոդվածի «16. Քաղաքաշինության բնագավառ» բաժնի 16.1-ին, 16.2-րդ և 16.3-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«16.1. Քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և փորձաքննության յուրաքանչյուր ներդիրի համար՝ տարեկան բազային տուրքի 40-ապատիկի չափով

16.2. Շինարարության իրականացման յուրաքանչյուր ներդիրի համար՝ տարեկան բազային տուրքի 80-ապատիկի չափով

16.3. Շինարարության որակի տեխնիկական հսկողության յուրաքանչյուր ներդիրի համար՝ տարեկան բազային տուրքի 50-ապատիկի չափով:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ս. Սարգսյան
2011 թ. հուլիսի 13
Երևան
ՀՕ-231-Ն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՕՐԵՆՔԸ

## Ընդունված է 2011 թվականի հունիսի 23-ին

## «ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-217 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի «է» կետում» հաղորդակցությունների համակարգերը» բառերը փոխարինել «ենթակառուցվածքներըե բառով:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «(այսուհետ՝ օգտագործող)» բառերը հանել, իսկ նույն մասը «կառուցապատող» բառից հետո լրացնել «(այսուհետ՝ կառուցապատող)» բառերով.

2) 4-րդ մասի «գ» կետի «(բացառությամբ ընթացիկ նորոգման աշխատանքների)» բառերը փոխարինել «(բացառությամբ սույն օրենքի 23 հոդվածով սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների)» բառերով.

3) 4-րդ մասի «դ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«դ) քաղաքաշինական գործունեություն իրականացնելու համար ճարտարապետահատակագծային առաջադրանք, այդ թվում՝ ինժեներական ենթակառուցվածքների նախագծման տեխնիկական պայմաններ ստանալ տեղական ինքնակառավարման համապատասխան մարմիններից.».

4) 4-րդ մասի «ե» կետն ուժը կորցրած ճանաչել.

5) 4-րդ մասի «զ» կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Քաղաքաշինական փաստաթղթերի մշակմանը մասնակցած նախագծային կազմակերպությունները կամ անձինք չեն կարող կատարել կամ ներգրավվել իրենց մշակած նախագծերի փորձաքննությանը».

6) 4-րդ մասի «թ» կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին չհակասելու դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ տեխնիկապես ոչ բարդ օբյեկտների շինարարության որակի տեխնիկական հսկողությունը կառուցապատողի և շինարարություն իրականացնողի փոխադարձ համաձայնությամբ կարող է փոխարինվել շինարարական աշխատանքների պատասխանատու կապալառուի երաշխավորության պայմանագրով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության, հաստատված նախագծի և նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջներին շինարարական աշխատանքների համապատասխանության վերաբերյալ.»:



Հոդված 3. Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասում ,ընդունել բնակավայրին բառերը փոխարինել ,ընդունել համայնքին բառերով:

Հոդված 4. Օրենքի 14.1-ին հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Պետական և համայնքային սեփականության հողամասերի օտարումը և օգտագործման տրամադրումը, հասարակության կամ պետական կարիքների համար գույքի օտարումը, ինչպես նաև հողամասերի կառուցապատումը, ճարտարապետահատակագծային առաջադրանքում, շինարարության և քանդման թույլտվություններում քաղաքաշինական սահմանափակումների ու սերվիտուտների և այլ պարտադիր պահանջների սահմանումն իրականացվում են գոտիավորմամբ սահմանված նորմերի հիման վրա՝ հողամասերի նպատակային ու գործառնական նշանակությանը, դրանց օգտագործման իրավական ռեժիմին և թույլատրված օգտագործումներին (կառուցապատումներին) համապատասխան:»:

Հոդված 5. Օրենքի 14.2-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «Հողատարածքները գոտիավորվում են» բառերը փոխարինել «Գոտիավորումն իրականացվում է» բառերով.

2) 2-րդ և 3-րդ մասերի «ա» և «բ» կետերից հանել «հողամասերի» բառը.

3) 2-րդ մասի «ա» կետի «ըստ նպատակային» բառերը փոխարինել «ըստ հողերի նպատակային» բառերով.

4) 3-րդ մասի «ա» կետը «օգտագործումների» բառից հետո լրացնել՝ «գոտու տարածքի ընդհանուր մակերեսի նկատմամբ դրանց սահմանային չափաբաժինների ամրագրմամբ» բառերով.

5) 3-րդ մասի «բ» կետը «չափորոշիչների» բառից հետո լրացնել «որոնք սահմանում են կառուցապատման բնույթն ու օգտագործման աստիճանն արտահայտող համակողմանի ցուցանիշներ (կառուցապատման խտություն, շենքերի ու շինությունների բարձրություն, կառուցապատված, կանաչապատ մակերեսների հարաբերակցություն և այլն)՝ տվյալ գոտու տարածքի համար թույլատրելի չափաբաժիններով» բառերով.

6) 4-րդ մասի «Գոտիավորմամբ» բառը փոխարինել «Հիմնական (բազային) գոտիավորմամբ» բառերով, իսկ «հանրապետության և մարզերի համար մշակված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերով, համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերով» բառերը՝»քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերով» բառերով.

7) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասով.

«Օժանդակ գոտիավորմամբ սահմանված պահանջները չեն կարող հակասել համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերով սահմանված հիմնական (բազային) գոտիավորման պահանջներին:»:

Հոդված 6. Օրենքի 14.3-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 14.3. Քաղաքաշինական գործունեության կանոնակարգումը համայնքի վարչական սահմաններում

1. Համայնքի վարչական սահմաններում քաղաքաշինական գործունեությունը կանոնակարգվում է սույն օրենքով և այլ օրենքներով պարտադիր մշակման ենթակա քաղաքաշինական ծրագրային երկու փաստաթղթերով՝ համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծով և քաղաքաշինական գոտիավորման նախագծով:

2. Համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծը (այսուհետ՝ գլխավոր հատակագիծ) համայնքի տարածական զարգացման հիմնադրույթներն ամրագրող ռազմավարական բնույթի փաստաթուղթ է, որը հիմնական (բազային) գոտիավորմամբ սահմանում է համայնքի վարչական սահմաններում քաղաքաշինական գործունեության օբյեկտ հանդիսացող հողերի նպատակային և գործառնական նշանակությունը, դրանց օգտագործման ռեժիմները ու պարտադիր պահանջները, ինչպես նաև տարածքների կառուցապատման առաջնահերթ, միջնաժամկետ և հեռանկարային փուլերը՝ քաղաքաշինական նպատակներով հողօգտագործումը կանոնակարգելու և արդյունավետ կառավարումն ապահովելու նպատակով:

3. Գլխավոր հատակագծով տարածքային ռեսուրսների ու կառուցապատման փաստացի վիճակի վերլուծության և համալիր գնահատականի հիման վրա սահմանվում են համայնքի տարածական զարգացման հիմնական ուղղությունները, ամրագրվում են սոցիալական, մշակութային, արդյունաբերական, գյուղատնտեսական, բնապահպանական, ինժեներական և տրանսպորտային ենթակառուցվածքների տեղադրման ու զարգացման փոխկապակցված լուծումները, ինչպես նաև բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքի պաշտպանության, քաղաքացիական պաշտպանության, լանդշաֆտների, բնական ու պատմամշակութային ժառանգության պահպանման միջոցառումները՝ պաշարների կայուն և արդյունավետ օգտագործման պայմանների պարտադիր ապահովմամբ:

4. Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքների համար մշակվում է պարզեցված գլխավոր հատակագիծ, որը սահմանում է նվազագույն պարտադիր պահանջներ՝ մարդկանց անվտանգության, շենքերի, շինությունների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների կայունության ու երաշխավորված շահագործման, քաղաքաշինական և բնական միջավայրերի միջև ներդաշնակության ապահովման համար:

5. Համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը (այդ թվում՝ վերջիններիս կազմում մշակվող՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները և նախագծման առաջադրանքը) համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի ավագանին:

6. Մինչև համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը և նախագծման առաջադրանքները ենթակա են դրանց մշակմանն առնչվող պետական կառավարման մարմինների հետ համաձայնեցման (այսուհետ՝ շահագրգիռ մարմիններ)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:



7. Համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակմանն աջակցելու և գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով քաղաքաշինության ոլորտի պետական կառավարման լիազորված մարմնում ստեղծվում է համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով (այսուհետ՝ միջգերատեսչական հանձնաժողով)՝ պետական կառավարման շահագրգիռ մարմինների ներգրավմամբ: Միջգերատեսչական հանձնաժողովն ապահովում է քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի կազմում ներառված դրույթների համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և այլ իրավական ակտերի պահանջներին՝ պետական կառավարման շահագրգիռ մարմինների կանոնադրական նպատակներին և խնդիրներին առնչվող մասով:

8. Համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը և դրանց նախագծման առաջադրանքները համայնքի ղեկավարի ներկայացմամբ քննարկվում են հանձնաժողովի նիստում և կարող են հաստատվել համայնքի ավագանու կողմից միայն միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացության առկայության դեպքում: Առանց միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացության հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը և (կամ) դրանց փոփոխություններն առ ոչինչ են:

9. Համայնքի ավագանին, հաստատելով գլխավոր հատակագծի նախագծային փաստաթղթերը, միաժամանակ իրավունք է ստանում փոխելու հողամասերի նպատակային նշանակությունը՝ գլխավոր հատակագծով սահմանված ծավալով ու փուլերով:

10. Համայնքի սեփականություն համարվող հողամասերը օտարվում կամ օգտագործման են տրամադրվում համայնքի ավագանու հաստատած ամենամյա և քառամյա ծրագրերին համապատասխան:

11. Համայնքի ղեկավարը իր իրավասությունների սահմաններում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով, սույն հոդվածի ինն երրորդ մասի համաձայն, նպատակային նշանակությունը փոփոխած հողամասերը կարող է տրամադրել սեփականության կամ օգտագործման իրավունքով, ինչպես նաև տրամադրել ճարտարապետահատակագծային առաջադրանքներ՝ քաղաքաշինական գործունեություն իրականացնելու համար:

12. Հողամասի նպատակային նշանակությունը համարվում է փոխված՝ հողամասի սեփականատիրոջ դիմումի համաձայն համայնքի ղեկավարի կողմից տվյալ հողամասը և (կամ) ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին սահմանված կարգով կայացրած որոշումն ուժի մեջ մտնելու պահից: Հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները պարտադիր ենթակա են պետական գրանցման: Հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխությունների մասին համայնքի ղեկավարը 10-օրյա ժամկետում տեղեկացնում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքները գրանցող պետական մարմնին և քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնին՝ կցելով այդ փոփոխությունները հաստատելու մասին համապատասխան որոշման սահմանված կարգով հաստատված պատճենը: Սույն մասին

համապատասխան՝ պետական գրանցում չունեցող հողամասերում նախատեսվող օբյեկտի համար շինարարության թույլտվություն չի տրվում:

13. Մինչև սույն հոդվածի տասներկուերորդ մասով սահմանված համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելը հողամասը դրա սեփականատիրոջ կամ օգտագործողի կողմից կարող է օգտագործվել նախկին նպատակային կամ գործառնական նշանակությամբ:

14. Սույն հոդվածի տասներկուերորդ մասի համաձայն՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկվում են համայնքի, մարզի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի, մարզի հողային հաշվեկշռում:

15. Համայնքների հաստատված, այդ թվում՝ սույն օրենքի 30 հոդվածի երրորդ մասով սահմանված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի փոփոխությունները (ներառյալ՝ կառուցապատման փուլերը) կատարվում են այդ փաստաթղթերի հաստատման համար սույն օրենքով և սույն օրենքի կիրարկումն ապահովող օրենսդրական այլ ակտերով նախատեսված կարգով:

16. Հաստատված գլխավոր հատակագծեր ունեցող համայնքներում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները կատարվում են բացառապես սույն օրենքով սահմանված կարգով գլխավոր հատակագծերում համապատասխան փոփոխություններ կատարելու միջոցով:

17. Քաղաքաշինական գոտիավորման նախագիծը (այսուհետ՝ գոտիավորման նախագիծ) համայնքի տարածական զարգացման մանրամասն պայմանները սահմանող գործադրական (օպերատիվ) բնույթի փաստաթուղթ է և հիմք է քաղաքաշինական նպատակներով հողամասերի և (կամ) ճարտարապետահատակագծային առաջադրանքների տրամադրման, շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի մշակման ու շինարարության թույլտվության համար:

18. Բնակավայրերի, դրանց առանձին մասերի, բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող քաղաքաշինական նպատակներով նախատեսված կամ նախատեսվող տարածքների կառուցապատման ռեժիմները սահմանվում են գոտիավորման նախագծերով՝ «սահմանված գոտի - թույլատրելի օգտագործում (կառուցապատում)» սկզբունքով, սույն օրենքի 14.2 հոդվածով սահմանված օժանդակ գոտիավորման միջոցով՝ հիմք ընդունելով գլխավոր հատակագծով սահմանված հիմնական (բազային) գոտիավորումը: Ըստ առանձնացված գոտիների սահմանված քաղաքաշինական նպատակներով հողերի օգտագործման և կառուցապատման թույլատրելի տեսակներն ու պայմանները տարբերվում են մեկից մյուս գոտի անցնելիս, բայց հաստատուն են մնում նույն գոտու ներսում:

19. Գյուղական համայնքներում և մինչև տասնհինգ հազար բնակչություն ունեցող քաղաքային համայնքներում գոտիավորման նախագիծը մշակվում է բնակավայրի, ինչպես նաև բնակավայրից դուրս գտնվող կառուցապատված կամ կառուցապատման ենթակա բոլոր տարածքների համար՝ գլխավոր հատակագծի կազմում:

20. Տասնհինգ հազարից ավելի բնակչություն ունեցող քաղաքային համայնքների (բացառությամբ Երևան քաղաքի) գլխավոր հատակագծի կազմում գոտիավորման նախագիծը մշակվում է գլխավոր հատակագծով առաջնահերթ կառուցապատման համար առանձնացված տարածքների, ինչպես նաև



գլխավոր հատակագծի նախագծման առաջադրանքով նախատեսված և տվյալ համայնքի առանձնահատկություններից բխող՝ կարևոր քաղաքաշինական հանգույցներ ներառող տարածքների համար:

Քաղաքային համայնքների այլ տարածքների համար գոտիավորման նախագծերը մշակվում են գլխավոր հատակագծով սահմանված ժամկետներում ու հերթականությամբ՝ որպես ինքնուրույն քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր, ընդ որում՝ դրանց մշակման ժամանակացույցը ներառվում է համայնքի քառամյա զարգացման ծրագրում:

21. Երևան քաղաքի գլխավոր հատակագծի կազմում գոտիավորման նախագծեր չեն մշակվում: Դրանք մշակվում, հաստատվում և փոփոխվում են որպես ինքնուրույն քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր՝ սույն հոդվածի քսաներորդ մասի երկրորդ պարբերությամբ և քսաներեքերորդ մասի պահանջներին համապատասխան՝ սույն օրենքով սահմանված կարգով:

22. Գլխավոր հատակագծի կազմում մշակված գոտիավորման նախագիծը հաստատվում և փոփոխվում է սույն օրենքով գլխավոր հատակագծի հաստատման և (կամ) փոփոխման համար նախատեսված կարգով:

23. Որպես ինքնուրույն փաստաթուղթ՝ մշակված գոտիավորման նախագիծը համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է ավագանին: Եթե այն պարունակում է հաստատված գլխավոր հատակագծով սահմանված պահանջների փոփոխություն, ապա համայնքի ավագանու կողմից գոտիավորման նախագիծը հաստատվում է գլխավոր հատակագծի՝ սույն օրենքին համապատասխան կատարված փոփոխությունները հաստատվելուց հետո:

Գոտիավորման նախագծի և դրա հաստատման մասին որոշման պատճենները եռօրյա ժամկետում ներկայացվում են քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմին:

24. Գլխավոր հատակագիծը և գոտիավորման նախագիծը մշակվում են համայնքի ավագանու կողմից հաստատված նախագծման առաջադրանքի հիման վրա, համայնքի ղեկավարի պատվերով՝ քաղաքաշինական փաստաթղթերի մշակման համապատասխան լիցենզիա ունեցող անձանց հետ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված նախագծային կապալի պայմանագրով:

25. Համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը ենթակա են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքաշինական համալիր և բնապահպանական փորձաքննության:

26. Պետության կողմից համայնքներին որպես սեփականություն փոխանցված հողերի իրացումից, ինչպես նաև հողերի նպատակային նշանակության փոփոխության հետևանքով առաջացած ֆինանսական միջոցներն ամբողջ ծավալով ուղղվում են քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր չունեցող համայնքների գլխավոր հատակագծերի և գոտիավորման նախագծերի մշակմանը:

27. Մինչև սույն օրենքի 30 հոդվածի չորրորդ մասով սահմանված ժամկետը, որպես համայնքները քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերով ապահովելուն ուղղված պետական խրախուսման միջոց,

Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերում և կարգով, կախված տվյալ տարվա բյուջետային հնարավորություններից, կարող են նախատեսվել պետական բյուջեի միջոցների հաշվին համաֆինանսավորում՝ ըստ տարիների աստիճանաբար նվազող համամասնությամբ, ինչպես նաև գլխավոր հատակագծի մշակման համար անհրաժեշտ ելակետային նյութերի (տոպոգրաֆիկական հանույթներ և կադաստրային քարտեզագրման նյութեր) անվճար տրամադրում համայնքներին:

28. Համայնքի քառամյա զարգացման ծրագրում պարտադիր ներառվում են համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման (եթե համայնքը չունի սահմանված կարգով հաստատված գլխավոր հատակագիծ և (կամ) գոտիավորման նախագիծ) կամ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերում փոփոխություններ (լրացումներ) կատարելու կամ դրանց անհրաժեշտության բացակայության մասին դրույթներ:

29. Պետական կամ համայնքային նշանակության նոր ծրագրի ընդունման հետևանքով առաջ եկած պահանջի դեպքում համայնքի հաստատված գլխավոր հատակագծում և (կամ) գոտիավորման նախագծում սույն օրենքով սահմանված կարգով կատարվում են անհրաժեշտ փոփոխություններ՝ նշված ծրագրով այդ նպատակի համար նախատեսվող միջոցների հաշվին:

30. Գլխավոր հատակագծի և գոտիավորման նախագծի իրագործումն ապահովում է համայնքի ղեկավարը՝ օրենքով իրեն վերապահված լիազորությունների սահմաններում: Համայնքի ղեկավարը կազմում և վարում է համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզը (այսուհետ՝ ընթացիկ քարտեզ), որում արտացոլվում են սահմանված կարգով տրամադրված հողամասերը (նպատակային կամ գործառնական փոփոխության մասին նշումով), նախագծման և շինարարության թույլտվությունները, ինչպես նաև գլխավոր հատակագծի և գոտիավորման նախագծի փոփոխությունները: Ընթացիկ քարտեզի սահմանված կարգով հաստատված պատճենը կցվում է համայնքի ամենամյա պարտադիր գույքագրման փաստաթղթերին, որը ներկայացվում է ավագանու հաստատմանը: Ընթացիկ քարտեզի փոփոխությունները կատարվում են գույքագրման փաստաթղթերի համար՝ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 46 հոդվածի պահանջներին համապատասխան:

31. Հաստատված գլխավոր հատակագծով և գոտիավորման նախագծով սահմանված պահանջները պարտադիր են քաղաքաշինական գործունեության բոլոր սուբյեկտների համար, տարածվում են անշարժ գույքի բոլոր օբյեկտների վրա՝ անկախ սեփականության ձևից, սեփականատերերի կամ օգտագործողների փոփոխման դեպքում պահպանում են իրենց ուժը և հիմք են քաղաքաշինական գործունեության իրականացման, վերահսկողության ու վիճելի հարցերի լուծման համար:

32. Արգելվում է 2016 թվականի հունվարի 1-ից հետո, առանց սահմանված կարգով հաստատված համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի, կառուցապատման նպատակներով հողամասերի և (կամ) ճարտարապետահատակագծային առաջադրանքների տրամադրումը:

33. Գլխավոր հատակագծերի և գոտիավորման նախագծերի կազմը, բովանդակությունը, ինչպես նաև դրանց մշակման, փորձաքննության, հաստատման և փոփոխման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:



Հոդված 7. Օրենքի 17-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասի՝

ա. «,ա» կետը «նախագծերը» բառից հետո լրացնել «(ազգային մակարդակ)» բառերով, «բ» կետը «մարզերի» բառից հետո՝ «(տարածքային/ռեգիոնալ մակարդակ)» բառերով, իսկ «տարածքներ ընդգրկող» բառերից հետո՝ (միկրոռեգիոնալ մակարդակ) բառերով,

բ. «գ» և «դ» կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ) Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերը (տեղական մակարդակ՝ տարածական պլանավորման ռազմավարական փաստաթուղթ).

դ) քաղաքաշինական գոտիավորման նախագծերը (տեղական մակարդակ՝ տարածական պլանավորման մանրամասն պայմանները սահմանող գործադրական (օպերատիվ) բնույթի փաստաթուղթ).».

2) 11-րդ մասի «Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների կողմից (բացառությամբ սույն օրենքի 14.3 հոդվածի երրորդ մասով սահմանված դեպքերի)» բառերը փոխարինել ,համայնքի ավագանու կողմից՝ սույն օրենքի 14.3 հոդվածով սահմանված պահանջներին համապատասխանե բառերով.

3) 12-րդ և 16-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել.

4) 15-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«15. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի մշակման համար կառուցապատողին տրվում է ճարտարապետահատակագծային առաջադրանք (նախագծման թույլտվություն), որը, հիմք ընդունելով համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի և քաղաքաշինական կանոնադրության պահանջները, սահմանում է քաղաքաշինական գործունեության տվյալ օբյեկտին ներկայացվող նախագծման պարտադիր պայմաններ, պահանջներ և սահմանափակումներ:».

5) 18-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«18. Ճարտարապետահատակագծային առաջադրանք տրամադրած մարմնի հետ սահմանված կարգով համաձայնեցված ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերը հաստատում է քաղաքաշինական օբյեկտի սեփականատերը կամ նրա լիազորած անձը՝ սույն օրենքի 23 հոդվածի չորրորդ մասով սահմանված պահանջներին համապատասխան:»:

Հոդված 8. Օրենքի 18-րդ հոդվածում «քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, կառուցապատման նախագծերին,» բառերը փոխարինել «տարածական պլանավորման փաստաթղթերին, սույն օրենքին և» բառերով:

Հոդված 9. Օրենքի 18.1-ին հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով.

«Հանրապետության համար ռազմավարական նշանակություն ունեցող մեկից ավելի համայնքների տարածքներ ընդգրկող ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների կառուցման նպատակով քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը (կառուցապատման ընթացակարգերը) սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 10. Օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի «համայնքի վարչական սահմաններից դուրս գտնվող տարածքներում և» բառերը հանել:

Հոդված 11. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 22.1-ին հոդվածով.

**«Հոդված 22.1. Ճարտարապետահատակագծային առաջադրանքը**

1. Ճարտարապետահատակագծային առաջադրանքը (կամ նախագծման թույլտվությունը) փաստաթուղթ է, որը, հիմք ընդունելով համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի և քաղաքաշինական կանոնադրության պահանջները, սահմանում է քաղաքաշինական գործունեության տվյալ օբյեկտին ներկայացվող նախագծման պարտադիր պահանջները, պայմանները, այդ թվում՝ սույն օրենքի 6 հոդվածի «դ» կետով սահմանված՝ քաղաքաշինական օբյեկտի ինժեներական ենթակառուցվածքների (ջրամատակարարում, ջրահեռացում, էլեկտրամատակարարում և այլն) նախագծման տեխնիկական պայմանները (այսուհետ՝ տեխնիկական պայմաններ) և սահմանափակումները:

Տեխնիկական պայմանները տալիս են ինժեներական սպասարկում իրականացնող ծառայությունները՝ ճարտարապետահատակագծային առաջադրանք տրամադրող մարմնին՝ վերջինիս հարցման հիման վրա, և կազմում են ճարտարապետահատակագծային առաջադրանքի անբաժանելի մասը:

2. Ճարտարապետահատակագծային առաջադրանքում նշվում են Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով սահմանված և օբյեկտի նախագծմանն առնչվող քաղաքաշինական, պատմության և մշակույթի հուշարձանների ու շրջակա միջավայրի պահպանության, սանիտարահիգիենիկ, հակահրդեհային, քաղաքացիական պաշտպանության, հաշմանդամների ու բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության և այլ նորմատիվ ակտերով սահմանված պահանջները:

3. Քաղաքաշինական գործունեություն իրականացնելու նպատակով պետության և համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերն օտարելու կամ օգտագործման տրամադրելու դեպքում ճարտարապետահատակագծային առաջադրանքի նախագիծը ներառվում է աճուրդի կազմակերպման փաստաթղթերի փաթեթում կամ մրցույթի պայմաններում: Օրենսդրությամբ սահմանված հողամասի տրամադրման այլ դեպքերում ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրվում է հողամասը հատկացնելու մասին որոշման հետ միաժամանակ:

4. Անշարժ գույքի սեփականատեր հանդիսացող կամ այն փոփոխելու իրավասությամբ օժտված օգտագործողին ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրվում է վերջինիս կողմից սույն հոդվածի վեցերորդ մասով սահմանված մարմնին ներկայացված հայտի հիման վրա:



5. Ճարտարապետահատակագծային առաջադրանքով սահմանված պայմանները հիմք են ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի մշակման համար և պարտադիր են քաղաքաշինական գործունեության բոլոր մասնակիցների համար: Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների փոխանցման դեպքում ճարտարապետահատակագծային առաջադրանքով սահմանված պայմանները պահպանվում են լրիվ ծավալով:

6. Ճարտարապետահատակագծային առաջադրանքը համայնքում տալիս է համայնքի ղեկավարը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

7. Համայնքի գլխավոր հատակագծով և գոտիավորման նախագծով սահմանված պահանջներին հակասող ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրումն արգելվում է:»:

Հոդված 12. Օրենքի 23-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի « համայնքի վարչական սահմաններից դուրս գտնվող տարածքներում՝ մարզպետը» բառերը հանել.

2) 5-րդ մասի «և տարածքների բարեկարգման» բառերը փոխարինել «տարածքների բարեկարգման և այլ ցածր ռիսկայնություն ունեցող» բառերով:

Հոդված 13. Օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի « համայնքի վարչական սահմաններից դուրս գտնվող տարածքներում՝ մարզպետը» բառերը հանել:

Հոդված 14. Օրենքի 25-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի «համայնքի վարչական սահմաններից դուրս գտնվող տարածքներում՝ մարզպետը» բառերը հանել.

2) հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«Շինարարական օբյեկտի շահագործումն իրականացվում է սույն օրենքի 2 հոդվածի «գ» կետի համաձայն՝ օբյեկտի սեփականատիրոջ (սեփականատերերի) և (կամ) օգտագործողի միջոցների հաշվին: Շենքերի, շինությունների շահագործման նվազագույն պարտադիր նորմերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 15. Օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի «ա» կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 16. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 26.2-րդ հոդվածով.

**«Հոդված 26.2. Հատուկ նշանակության հողերում քաղաքաշինական գործունեության իրականացման առանձնահատկությունները**

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 24 հոդվածով սահմանված հատուկ նշանակության հողերում քաղաքաշինական գործունեության, այդ թվում՝ սույն օրենքի 6 հոդվածի չորրորդ մասի «դ» կետով, 13 և 14 հոդվածներով, 17 հոդվածի տասնութերորդ մասով, 23 հոդվածի երկրորդ մասով, 24 հոդվածի երկրորդ մասով, 25 հոդվածի երկրորդ մասով սահմանված լիազորությունների իրականացման

կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների ապահովմամբ:»:

Հոդված 17. Օրենքի 30-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 30. Անցումային դրույթներ

1. Հաստատված տարածական պլանավորման փաստաթղթերի բացակայության դեպքերում մինչև դրանց մշակումն ու հաստատումը տվյալ համայնքում քաղաքաշինական գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

2. Մինչև համայնքների գլխավոր հատակագծերի հաստատումը համայնքի վարչական տարածքում հողերի նպատակային նշանակության փոփոխությունները հաստատում է համայնքի ավագանին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հատուկ այդ նպատակով ստեղծված ժամանակավոր միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացության առկայության դեպքում:

3. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը համայնքի ավագանու հավանությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած գլխավոր հատակագծերը համարվում են հաստատված համայնքի ավագանու կողմից:

4. Սույն օրենքի 14.3 հոդվածի երեսուներկուերորդ մասն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:»:

Հոդված 18. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության

Նախագահ Ս. Սարգսյան

2011 թ. հուլիսի 13

Երևան

ՀՕ-226-Ն



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## 23 հունիսի 2011 թվականի N 879-Ն

## ԳՈՐԾՈՂ ԳՆԵՐՈՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 1748-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ՈՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ կետին և 23-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածում կատարել վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1748-Ն որոշման NN 5, 10 և 11 հավելվածներում կատարել լրացումներ ու փոփոխություններ՝ համաձայն NN 1, 2, 3, 4 և 5 հավելվածների:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի պահպանման ծախսերը, ինչպես նաև գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման նոր կարգի կիրարկման մեթոդաբանության մշակումը ֆինանսավորելու նպատակով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությանը հատկացնել 43,389.0 հազ. դրամ՝ Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին՝ համաձայն NN 6 և 7 հավելվածների:

3. Հաստատել գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգը՝ համաձայն N 8 հավելվածի:

4. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի ծրագրերով նախատեսված կապիտալ վերանորոգման և շինարարության աշխատանքների համար մինչև սույն

որոշումն ուժի մեջ մտնելը կազմված նախագծանախահաշվային փաստաթղթերը ենթակա չեն վերանայման ու լրամշակման և գործում են մինչև դրանցով նախատեսված աշխատանքների ավարտը:

5. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնել գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման նոր կարգի կիրարկման մեթոդաբանությունը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության**
**վարչապետ** **Տ. Սարգսյան**

**2011 թ. հուլիսի 6**
**Երևան**

**Հավելված N 8**
**ՀՀ կառավարության 2011 թվականի**
**հունիսի 23-ի N 879-Ն որոշման**

## Կ Ա Ր Գ

## ԳՈՐԾՈՂ ԳՆԵՐՈՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ

### 1. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. «Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգ» նորմատիվատեխնիկական փաստաթղթի (այսուհետ՝ կարգի) կիրառումը տարածվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի նոյեմբերի 23-ի «Շինարարության ոլորտում գնագոյացման նորմերի և նորմատիվների կիրառումն ապահովելու մասին» N 1484-Ն որոշմամբ նախատեսված քաղաքաշինական գործունեության սուբյեկտների և/կամ մասնակիցների (այդ թվում՝ կառուցապատողների, քաղաքաշինական փաստաթղթեր մշակողների, շինարարություն իրականացնողների, քաղաքաշինական գործունեության վերահսկողություն իրականացնողների) վրա:

2. Սույն կարգը մշակվել է Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող նոր շինարարության, գոյություն ունեցող շենքերի և շինությունների հիմնանորոգման (վերակառուցման, վերականգնման, ուժեղացման), ընդլայնման, արդիականացման (հետագայում՝ Շինարարության) աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ընթացքում անհրաժեշտ ծախսերի



(բացառությամբ մասնագիտական ուսումնասիրության և անհրաժեշտ փորձաքննության արդյունքում տրվող եզրակացությունների ձեռքբերման ծախսերի) հաշվարկման նորմերը նախատեսելու համար:

### 2. ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

3. Սույն կարգում կիրառված են հետևյալ տերմինները՝ համապատասխան սահմանումներով՝

*Ամսական միջինացված (կամ միջին) աշխատավարձ՝* նախահաշվային փաստաթղթերում կիրառվող աշխատավարձի հաշվարկային (միջինացված) ցուցանիշ,

*Ինֆորմացիոն տեղեկագիր՝* ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից պարբերաբար (1 ամսվա կտրվածքով) հրատարակվող տեղեկատու-ձեռնարկ:

### 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4. Սույն կարգը սահմանում է առանձին շենքերի և շինությունների շինարարության արժեքի ձևավորման հիմնական դրույթները, կառուցվածքն ու ծախսերի հաշվարկը:

5. Շինարարական աշխատանքների արժեքի կառուցվածքը ներկայացվում է հետևյալ բանաձևով՝

$$Ա = Ծ + Շ + Հ \qquad (1)$$

որտեղ՝

Ա՝ արժեքն է

Ծ՝ ծախսերն են

Շ՝ շահույթն է

Հ՝ հարկերն են

6. Շինարարական աշխատանքների արժեքում ծախսերի կառուցվածքը՝ ելնելով շինարարական նորմերից, բաղկացած է.

$$Ծ = Ծ_{ու} + Ծ_{վ} + Ծ_{այլ} \qquad (2)$$

որտեղ՝

Ծ՝ շինարարական աշխատանքների արժեքում հաշվի առնված ծախսերն են

$Ծ_{ու}$՝ ուղղակի ծախսեր

$Ծ_{վ}$՝ վերադիր ծախսեր

$Ծ_{այլ}$՝ այլ ծախսեր

1) ուղղակի ծախսերին ($Ծ_{ու}$) վերաբերում են այն ծախսերը, որոնք ուղղակիորեն կապված են արտադրության հետ՝ այն է.

$$Ծ_{ու} = Ա_{շ} + Ա_{մ} + Ա_{մեք} \qquad (3)$$

որտեղ՝

$Ա_2$՝ արտադրական գործընթացում զբաղված աշխատողների (համապատասխան որակավորում ունեցող բանվորների և մեխանիզատորների) աշխատավարձն է, այդ թվում՝ «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքով նախատեսված պարտադիր վճարները.

$Ա_6$՝ նյութերի, պատրաստվածքների, կիսապատրաստուկների և կոնստրուկցիաների արժեքը, տեղակայման ենթակա սարքավորումների, պահեստամասերի, վառելիքի և այլ նյութերի արժեքը, արտադրական գործընթացին անհրաժեշտ բնական ռեսուրսների ձեռքբերման և օգտագործման ծախսերը, ինչպես նաև բնապահպանական վճարները.

Ամեք՝ անմիջապես շինարարությանը մասնակցող մեքենաների, փոխադրամիջոցների և այլ մեխանիզմների սպասարկման և շահագործման հետ կապված ծախսերն են (արժեքը).

2) վերադիր ծախսերին ($Ծ_վ$) վերաբերում են աշխատանքների կազմակերպման հետ կապված ծախսերը (կառավարման ապարատի և գծային անձնակազմի (աշխղեկ, վարպետ, տեղամասերի պետեր և այլն) վարձատրում, փոքրարժեք գույքի մաշվածություն, շենքերի և կառուցվածքների (ժամանակավոր և մշտական) ամորտիզացիոն ծախսեր, վարձավճարներ, պահպանման ծախսեր (ընթացիկ և կապիտալ վերանորոգման, ջրի, էլեկտրաէներգիայի, ջեռուցման, կապի և այլն), օժանդակ (հիմնական կազմի մեջ չմտած) բանվորների աշխատավարձ, սոցապահովման հատկացումներ և այլ ծախսեր, որոնք հաշվի չեն առնված ուղղակի ծախսերի մեջ).

3) այլ ծախսերը ($Ծ_այլ$) հաշվի են առնում աշխատանքների վրա ազդող հատուկ (շինարարական հրապարակի վայրը, շինարարական աշխատանքների կազմակերպման ծախսերը, կլիմայական պայմանները, շինարարական աշխատանքներ իրականացնող կազմակերպության առանձնահատկությունները) պայմանները:

## 4. ՉՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱԽՍԵՐ

7. Ամփոփ նախահաշվում առանձին տողով ներկայացվող՝ շինարարության ընթացքում բացահայտված և պարտադիր կատարման ենթակա աշխատանքների համար պահանջվող չնախատեսված ծախսերն անհրաժեշտ է հաշվարկել շինարարության ամբողջ նախահաշվային արժեքից:

8. Չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսվող հատկացումների սահմանային չափերը ընդունվում են ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից՝ ըստ թիվ 1 աղյուսակի:



Աղյուսակ 1

| | Կառույցի տեսակը | Չնախատեսված աշխ-րի ծախսերի տոկոսային (%) չափաբաժինը՝ օբյեկտի նախահաշվային արժեքից հաշվարկվող (նորակառույց/վերակառուցվող, հիմնանորոգվող, ամրացվող) |
|---|---|---|
| I. | Երկփուլ նախագծով՝ ,Նախագիծ և ,Աշխատանքային փաստաթղթեր փուլերով նախագծվող օբյեկտներ | |
| | *Հատուկ նախագծերով իրականացվող* | |
| 1. | - լեռնահարստացման, գունավոր մետալուրգիայի և քիմիական արտադրության կազմակերպություններ, հիդրոէլեկտրակայաններ, ատոմային էլեկտրակայաններ, մետրոպոլիտեն, թունելներ, խոշոր կամուրջներ, ինչպես նաև կամուրջներ ե/բետոնյա թռիչքային շինվածքներով ավելի քան 80 մ երկար. և մետաղական թռիչքային շինվածքներով ավելի քան 100 մ երկար., արտառոց՝ տեխնիկապես բարդ լուծումներով շենքեր և շինություններ | 10/12 |
| 2. | - մետալուրգիայի և քիմիական գործարաններ, նավթարտադրության, գազարտադրության (հարստացման) գործարաններ, մանրէաբանական արտադրության կազմակերպություններ, մելիորատիվ շինարարության օբյեկտներ, ծովային հիդրոտեխնիկական կառույցներ | 7/8 |
| 3. | - արտադրական և գյուղատնտեսական բնույթի այլ կազմակերպությունների շենքեր ու շինություններ, տրանսպորտի և կապի, հասարակական նշանակության շենքեր ու շինություններ (բացի բնակելի շենքերից) | 5/6 |
| 4. | - բնակելի շենքեր | 3/4 |
| | *Տիպային և կրկնակի կիրառման (հատուկ) նախագծերով իրականացվող շինարարության օբյեկտներ* | |
| 5. | - հասարակական նշանակության շենքեր և շինություններ, բնակելի շենքեր | 2/3 |
| 6. | - արտադրական նշանակության օբյեկտներ | 3/4 |
| II. | Մեկ՝ «Աշխատանքային նախագիծ» փուլով նախագծվող օբյեկտներ | |
| | *Տիպային և կրկնակի կիրառման նախագծերով իրականացվող* | |
| 1. | - արտադրական շենքեր և շինություններ, ինչպես նաև նոր (հատուկ) նախագծերով իրականացվող բնակելի շենքեր | 3/4 |

| | | |
|---|---|---|
| | *Հատուկ նախագծերով իրականացվող* | |
| 2. | - հասարակական շենքեր և շինություններ | 5/6 |
| | *Տիպային և կրկնվող նախագծերով իրականացվող* | |
| 3. | - հասարակական շենքեր և շինություններ, բնակելի շենքեր | 2/3 |
| 4. | - արտադրական այն օբյեկտների համար, որոնք չեն նախատեսվել սույն աղյուսակի 1-ին կետի ա) ենթակետի 10/12 %-ին կիրառվում է 0.5 գործակիցը (բայց ոչ պակաս, քան 3% շինարարության կամ հիմնանորոգման նախահաշվային արժեքից) | 3-5 (3-6 |
| III. | Հատուկ նշանակության օբյեկտներ՝պաշտպանական և ռազմական նշանակության շենքեր և շինություններ (Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 21-ի N 812 որոշում) | 6/7 |
| IV. | ՀՀ Նախագահի, ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ կառավարության աշխատակազմերի հաշվեկշիռներում գտնվող շենքեր, շինություններ (Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 26-ի N 63-Ն որոշում) | 5/6 |

9. Կապալի պայմանագրով նախատեսված և կապալառուին նախապես տրամադրվող չնախատեսված աշխատանքների և ծախսերի համար անհրաժեշտ գումարը սահմանվում է թիվ 1 աղյուսակում նշված նորմատիվի 50 տոկոսի չափով:

10. Կապալառուին նախապես տրամադրվող՝ չնախատեսված աշխատանքների և ծախսերի համար անհրաժեշտ միջոցներն օգտագործվում են կապալառուի կողմից, իր իսկ նախաձեռնությամբ շինարարության կազմակերպման ընթացքում աշխատանքների կատարման ձևի (ուղիների) փոփոխման, մեխանիզմների, աշխատանքային գծագրերում նախատեսված առանձին շինարարական կոնստրուկցիաների և նյութերի այլ կոնստրուկցիաներով և նյութերով փոխարինման անհրաժեշտությունից ելնելով:

11. Թիվ 1 աղյուսակում սահմանված նորմատիվի մնացած 50 տոկոսի չափով՝ որպես չնախատեսված աշխատանքների և ծախսերի համար պատվիրատուի կողմից կապալառուին տրամադրվող պահուստային միջոցները ենթակա են վճարման՝ վերջինիս կողմից հիմնավորող փաստաթղթերը (կատարողական ակտերի, հեղինակային և տեխնիկական հսկողություն իրականացնող անձերի եզրակացությունների առկայության) ներկայացվելու դեպքում:

12. Չնախատեսված աշխատանքների և ծախսերի պահուստային միջոցները մնացած 50 տոկոսի չափով կարող են տրամադրվել աշխատանքային փաստաթղթերում ծավալահատակագծային, կոնստրուկտիվ, տեխնոլոգիական լուծումների փոփոխման (արդիականացման), նախահաշվային արժեքի



ճշգրտման, նախագծանախահաշվային փաստաթղթերում տեղ գտած սխալների ուղղման, լրացուցիչ ծախսերի փոխհատուցման, որոնք պայմանավորված են նոր նյութերի և պատրաստվածքների ներդրմամբ և առաքմամբ, սարքավորումների ձեռքբերման և մոնտաժման արժեքների փոփոխման հետ կապված ծախսերի անհրաժեշտությամբ:

13. Սույն Կարգով սահմանված դեպքերում՝ կապալառուի կողմից չնախատեսված աշխատանքների և ծախսերի համար նախատեսվող չօգտագործված գումարները (այդ թվում՝ պահուստային միջոցները) ենթակա են վերաբաշխման մինչև ընթացիկ տարվա ավարտը և/կամ վերադարձման պետական բյուջե:

## 5. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿ

## ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՀԱՇՎԱՐԿ

14. Աշխատավարձը հաշվարկվում է՝

$$Ա_2 = S \times Դ \times Գ \qquad (4.1)^*$$

որտեղ՝

$Ա_2$՝ աշխատավարձի չափն է

S՝ աշխատատարությունը մարդ/ժամ (որոշվում է ըստ աշխատանքի ծավալի չափի և միավոր աշխատաժամի համար սահմանված նորմի)

Դ՝ 1 ժամվա դրույքն է (որոշվում է միջինացված (կամ միջին Ամիջ) ամսական աշխատավարձի և ամսական աշխատաժամի նորմի (173.1) հարաբերակցությամբ)

$Դ = Ա_{միջ}/173.1$

Գ՝ սոցապահովման հատկացումների գործակիցն է

*15. Աշխատավարձը հաշվարկվում է նաև գործակիցների կիրառման մեթոդով՝ 1984 թ. գների նկատմամբ*

$Ա_2 = Ա_{2գ} \times Ա_{միջ}84$ (4.2)*

$Ա_{2գ} = Ա_{միջ}07 \times Գ_{սոց}$ : (81.7 x 1.325)

$Ա_{2գ}$՝ աշխատավարձի հաշվարկման գործակից

$Գ_{սոց}$՝ սոցապահովման հատկացումների գործակիցն է

$Ա_{միջ}84$ = 81.7 x 1.325, որտեղ

81.7՝ 1984 թ. նորմերով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափ

1.325՝ 1984 թ. գնացուցակներով (ԵՐԵՐ) ընդունված գործակից՝ նվազագույն ամսական աշխատավարձից միջին ամսական աշխատավարձի անցման:

* (4.1) և (4.2) բանաձևերը կիրառելի են ըստ ընտրության:

*16. Աշխատավարձի միջինացված ցուցանիշը Ամիջ (կամ տվյալ պահին հաշվարկման ենթակա $Ա_{միջ}$)* կայուն ցուցանիշ չէ և միտում ունի պարբերաբար փոփոխվելու՝ սահմանվող նվազագույն և վիճակագրական տվյալներում գրանցվող (այդ թվում՝ մեկ ամսվա կտրվածքով) աշխատավարձերի ցուցանիշների տատանումների հետ մեկտեղ:

## 6. ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿ

17. Նյութերի արժեքը հաշվարկվում է.

$$Ա_{ն}=(Ն_1 \times Գ_{ն1} + Ն_2 \times Գ_{ն2} +.....+Ն_n \times Գ_{նn}) \times 1.05 \times Գ_{տրանսպ} \times 1.02 \quad (5)$$

որտեղ՝

$Ա_{ն}$՝ նյութերի արժեքն է

$Ն_1, Ն_2, Ն_n$՝ նյութերի ծախսն է նախահաշվային գործող նորմերով

$Գ_{ն}1, Գ_{ն2}, Գ_{նn}$՝ նյութերի, պատրաստվածքների և կոնստրուկցիաների արժեքները ընդունվում են նախահաշվային հաշվարկների կազմման ժամանակ՝ գործող գներով: Գործող գների հիմք է ծառայում ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից հրատարակվող ինֆորմացիոն տեղեկագիրը, իսկ տվյալների բացակայության դեպքում, շուկայի ուսումնասիրության արդյունքում արձանագրված տվյալները և գները հիմնավորող փաստաթղթերը

1.05 - այլ նյութերի քանակը հաշվի առնող գործակից

1.02 - փաթեթավորման-պահեստավորման ծախսեր:

18. Տրանսպորտային ծախսերի գործակիցը $Գ_{տրանսպ}$ հաշվարկվում է նախահաշիվներ կազմող՝ նախագծային կազմակերպության կողմից՝ ելնելով շինարարության պայմաններից (շինարարության վայրից, ներկրվող նյութերից ու դրանց տեղափոխման հեռավորությունից):

19. Տրանսպորտային ծախսերի հաշվարկը կատարվում է թիվ 2 աղյուսակում նշված գործակիցների կիրարկմամբ:

Աղյուսակ 2

| Հ/հ | ՀՀ մարզը և ՀՀ համայնքը, որտեղ իրականացվում է շինարարությունը | $Գ_{տրանսպ}$ % |
|---|---|---|
| 1 | Երևան համայնք | 5.72 |
| 2 | Արմավիրի մարզ | 6.15 |
| 3 | Արարատի մարզ | 7.00 |
| 4 | Արագածոտնի մարզ | 6.79 |
| 5 | Կոտայքի մարզ | 6.57 |
| 6 | Գեղարքունիքի մարզ | 8.98 |
| 7 | Վայոց ձորի մարզ | 7.61 |
| 8 | Լոռու մարզ | 8.93 |
| 9 | Շիրակի մարզ | 8.80 |
| 10 | Սյունիքի մարզ | 12.9 |
| 11 | Տավուշի մարզ | 13.20 |



## 7. ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿ

20. Մեքենաների և մեխանիզմների շահագործման արժեքը հաշվարկվում է.

$$Ամեք = (Ժ_1 \times Ա_1 + Ժ_2 \times Ա2.....Ժ_nԱ_n) \times 1.03 \quad (6)$$

որտեղ՝

Ամեք՝ մեքենաների և մեխանիզմների շահագործման արժեքն է

$Ժ_1, Ժ_2, Ժ_n$՝ մեքենաների աշխատանքի ժամանակն է

$Ա_1, Ա_2, Ա_n$՝ 1 մեքենա/ժամի արժեքն է (ընդունվում է շահագործող կազմակերպության հետ պայմանագրով կամ շինարարական կազմակերպության հաշվարկային գներով)

1.03 - այլ մեքենաների շահագործման արժեքը հաշվի առնող գործակից:

21. Մեքենաների ու մեխանիզմների շահագործման ծախսերի (1984 թ. գների նկատմամբ) անցման գործակիցը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$K_{մեք.շահ} = \frac{(0.208 \times Գահ + 0.144 \times Գ_{որ} + 0.286 \times ԳԱՇ + 0.321 \times Գ_{ԷՆ}}{0.959} \quad (7)$$

որտեղ՝

$Գ_{ահ}$ = 1470.48՝ ամորտիզացիոն հատկացումների վերահաշվարկման գործակից, ընդունվում է ՀՀ կառավարության կողմից լիազորված պետական մարմնի հրամանով

$Գ_{որ}$ = 2042.63՝ պահեստամասերի արժեքի փոփոխման գործակից, ընդունվում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից հրատարակվող ինֆորմացիոն տեղեկագրում բերված տվյալների կամ նախահաշիվներ կազմող՝ նախագծային կազմակերպության կողմից կատարված հաշվարկների հիման վրա

$Գ_{ԷՆ}$ = 3668,13՝ էներգիայի տեսակների արժեքի փոփոխման գործակիցն է

$$Գ_{ԷՆ} = 08Գ_{դիզ.վառ} + 0.2Գ_{էլ.էներգ} \quad (8)$$

որի 80%-ը կազմում է դիզ. վառելիքի արժեքի փոփոխությունը և որոշվում է

$$Գ_{դիզ.վառ} = \frac{Ա_{վ} \times 1.18}{0.08} \quad (9)$$

$Ա_{վ}$՝ 1 լ վառելիքի արժեքն է գործող գներով

0.08՝ 1 կգ վառելիքի արժեքն է 1984 թ. գների մակարդակով

1.18՝ 1 լիտրից 1 կգ-ի անցման գործակիցը

20 %-ը կազմում է էլեկտրաէներգիայի արժեքի փոփոխությունը և որոշվում է.

$$Գ_{էլ.էներգ} = \frac{Ա_{էներգ}}{0.0325} \quad (10)$$

$Ա_{էներգ}$՝ 1 կվտ ժամ էլեկտրաէներգիայի արժեքն է՝ գործող գներով

0.0325՝ 1 կվտ ժամ էլեկտրաէներգիայի արժեքն է 1984 թ. գների մակարդակով

$Գ_{աշ}$ = 1372,66՝ աշխատավարձի անցման գործակիցն է (1984 թվի դրությամբ):

$K_{մեք.շահ}$ գործակցի հաշվարկային արժեքը հաշվարկվում և հրապարակվում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:»:

Աղյուսակ 3

| Հ/հ | Համապատասխան հատկացումներ | Շահագործման ծախսերից կազմող բաժնեմասի չափը |
|---|---|---|
| 1 | ամորտիզացիա | 0.208 |
| 2 | պահեստամասեր | 0.144 |
| 3 | աշխատավարձ | 0.286 |
| 4 | վառելանյութ, էլեկտրաէներգիա, քսայուղեր | 0.321 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ՝ բաժնեմասերի գումարը | 0.959 |

## 8. ՎԵՐԱԴԻՐ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ

22. Վերադիր ծախսերը ($Ծ_վ$) հաշվարկվում են ուղղակի ծախսերի արժեքից՝

$$Ծ_վ = \frac{Ծ_{ու} \times 13.3\%}{100\%} \qquad (11)$$

$Ծ_{ու}$՝ ուղղակի ծախսեր

23. 13.3 %՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից հաստատված ուղղակի ծախսերից մասհանվող տոկոսաչափն է:

## 9. ՇԱՀՈՒՅԹԻ ՉԱՓԻ ՀԱՇՎԱՐԿ

24. Շահույթը (Շ) հաշվարկվում է ուղղակի և վերադիր ծախսերի արժեքից՝

$$Շ = (Ծ_{ու} + Ծ_վ) \times 11\%$$

$Ծ_{ու}$՝ ուղղակի ծախսեր

$Ծ^վ$՝ վերադիր ծախսեր

25. ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող շինարարության համար շահույթը սահմանել առավելագույնը 11 %:

## 10. ԱՅԼ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ

26. Այլ ծախսերը հաշվարկվում են հետևյալ բանաձևով.



$$Ծ_{այլ} = Ծ_{ժկ} + Ծ_{կլ} + Ծ_{լթ} \qquad (13)$$

որտեղ՝

$Ծ_{այլ}$՝ այլ ծախսեր

$Ծ_{ժկ}$՝ ժամանակավոր, կենցաղային նշանակության (շարժական կամ հավաքովի) շենքերի և շինությունների, պահեստների, ժամանակավոր ինժեներական ցանցերի (էլեկտրաէներգիա, ջուր, մոտեցնող ճանապարհներ և հարթություններ և այլն) իրական ծախսերն ընդունվում են ՀՀ քաղաքաշինության նախարարության նորմերով (21.08.2001 թ. թիվ 69 հրաման)

$Ծ_{ժկ}$՝ շինարարական աշխատանքների վրա կլիմայական պայմանների ազդեցության լրացուցիչ ծախսերը ընդունվում են ՀՀ քաղաքաշինության նախարարության նորմերով (ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի օգոստոսի 21-ի N 68 հրաման)

$Ծ_{լթ}$՝ շինարարության առանձնահատուկ պայմանները հաշվի առնող այլ լրացուցիչ ծախսերն են, որոնք անհրաժեշտ են ՀՀ կառավարության (ՀՀ կառավարման մարմնի) կողմից վերջինիս համար նախատեսվող արտոնությունները հաշվի առնելու համար:

## 11. ՀԱՐԿԵՐ

27. ՀՀ օրենքով սահմանված հարկերը հաշվարկվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 12. ՆԵՂՎԱԾՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐ

28. Գործող (շահագործվող) օբյեկտներում՝ նեղվածքի պայմաններում շինմոնտաժային աշխատանքների իրականացման համար նախատեսվող ծախսերը հաշվարկվում են EPEP - 85 ժողովածուի մեջ ներառված համապատասխան գործակցի միջոցով:

29. Քաղաքի խիտ կառուցապատված մասում նեղվածքի պայմաններում իրականացվող շինարարությունը առանձնանում է.

1) գոյություն ունեցող ճյուղավորված ստորգետնյա կոմունիկացիոն ցանցերի տեղափոխման և/կամ փոխարինման,

2) նեղվածքի պայմաններում կամ անմիջապես շինհրապարակում նյութերի (կոնստրուկցիաների) պահեստավորման,

3) անվտանգության տեխնիկայի կանոնների պահանջներին համապատասխան շինարարության կազմակերպման նախագծով (ՇԿՆ) նախատեսված վերամբարձ կռունկի (սլաքի պտույտի) սահմանափակ գործողությունների համար լրացուցիչ աշխատանքների կատարման անհրաժեշտությամբ:

## 13. ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ (ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ) ԱՐԺԵՔՆԵՐ

30. Պետական բյուջեի միջոցներով իրականացվող օբյեկտների նախագծանախահաշվային փաստաթղթերի պարտադիր փորձաքննության համար անհրաժեշտ ծախսերը հաշվարկվում են օբյեկտի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների արժեքից՝ ըստ 4 աղյուսակի:

Աղյուսակ 4

| | Օբյեկտի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների արժեքը (մլն դրամ) | Մասհանվող տոկոսաչափը (մատուցվող ծառայության ծախսերը %) |
|---|---|---|
| 1 | 0.1-ից մինչև 0.5 ներառյալ | 12 |
| 2 | 0.5-ից ավելի մինչև 1.0 ներառյալ | 11 |
| 3 | 1.0-ից ավելի մինչև 5.0 ներառյալ | 10 |
| 4 | 5.0-ից ավելի մինչև 10.0 ներառյալ | 9 |
| 5 | 10.0-ից ավելի մինչև 15.0 ներառյալ | 8 |
| 6 | 15.0-ից ավելի մինչև 20.0 ներառյալ | 7 |
| 7 | 20.0-ից ավելի մինչև 30.0 ներառյալ | 6 |
| 8 | 30.0-ից ավելի մինչև 50.0 ներառյալ | 5 |
| 9 | 50.0-ից ավելի մինչև 100.0 ներառյալ | 3.5 |
| 10 | 100.0-ից ավելի | պայմանագրային |
| 11 | Վերոհիշյալ (կողմնորոշիչ) նորմերը սահմանված են նախագծանախահաշվային փաստաթղթերի ամբողջական ծավալի համար: Նախագծանախահաշվային փաստաթղթերի կրկնակի փորձաքննության անհրաժեշտությամբ թելադրված ծառայության ծախսերը (արժեքը) հաշվարկում են օբյեկտի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների արժեքից՝ K = 0.2 գործակցի կիրառմամբ: Նկուղային հարկերի վերազինման, ինչպես նաև ցոկոլային և այլ տարածքների նախագծերի փորձաքննության արժեքը պայմանագրային է: | |



## 14. ՓՈՔՐ ԾԱՎԱԼԻ ՇԻՆՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱԽՍԵՐ

Աղյուսակ 5

| | Կատարվող աշխատանքների ծավալը | Նախահաշվային արժեքից մասհանվող տոկոսաչափ (%) |
|---|---|---|
| 1 | 1-ից մինչև 25 մլն դրամ ներառյալ | 2 |
| 2 | 25-ից մինչև 50 մլն դրամ ներառյալ | 1,5 |
| 3 | 50-ից մինչև 100 մլն դրամ ներառյալ | 1 |

## 15. ՇԻՆՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ ՏԱՐԱԾՔԻ ՍԱՔՄԱՆ ԵՎ ԳՈՅԱՑԱԾ (ՈՉ ԸՆԹԱՑԻԿ) ԱՂԲԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱԽՍԵՐ

Աղյուսակ 6

| Աշխատանքների անվանումը | Նախահաշվային արժեքից մասհանվող տոկոսաչափ (%) |
|---|---|
| Շինմոնտաժային աշխատանքների ավարտից հետո գոյացած աղբի տեղափոխում | 0,15 |

## 16. ՕԲՅԵԿՏԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐ

31. Պետական բյուջեի միջոցներով իրականացվող շինարարության ամբողջ ընթացքում մասնագիտական որակավորում ունեցող (արտոնագրված) անձի կողմից՝ պայմանագրային հիմունքներով տեխնիկական ծառայության մատուցման համար անհրաժեշտ ծախսերը սահմանվում են և հաշվարկվում օբյեկտի շինմոնտաժային աշխատանքների նախահաշվային արժեքից՝ ըստ 7 աղյուսակում նշված տոկոսաչափի (բացառությամբ 8-րդ աղյուսակում նշված օբյեկտների):

Աղյուսակ 7

| Հ/h | Օբյեկտի շինմոնտաժային աշխատանքների նախահաշվային արժեքը (մլն դրամ) | Ծառայության մատուցման ծախսերի տոկոսաչափ (%) |
|---|---|---|
| | մինչև 50.0 ներառյալ | 2 |
| | 50-ից ավելի մինչև 100 ներառյալ | 1.8 |
| | 100-ից ավելի մինչև 300 ներառյալ | 1.5 |
| | 300-ից ավելի մինչև 500 ներառյալ | 1.3 |
| | 500-ից ավելի մինչև 800 ներառյալ | 1.2 |

| | | |
|---|---|---|
| | 800-ից ավելի մինչև 1000 ներառյալ | 1.1 |
| | 1000-ից ավելի | 1.0 |

32. Պատմության և մշակույթի հուշարձանների վերականգնման, փոփոխման, ամրակայման, տեղափոխման ու վերանորոգման տեխնիկական հսկողության ծառայության ծախսերի համար նախատեսվում են հետևյալ տոկոսաչափերը՝ ըստ 8 աղյուսակի:

Աղյուսակ 8

| Հ/հ | Օբյեկտի շինմոնտաժային աշխատանքների նախահաշվային արժեքը (մլն դրամ) | Ծառայության մատուցման ծախսերի տոկոսաչափ (%) |
|---|---|---|
| | մինչև 20.0 ներառյալ | 3.0 |
| | 20-ից ավելի մինչև 35 ներառյալ | 2.5 |
| | 35-ից ավելի մինչև 50 ներառյալ | 2.0 |
| | 50-ից ավելի մինչև 70 ներառյալ | 1.5 |
| | 70-ից ավելի մինչև 90 ներառյալ | 1.25 |
| | 90-ից ավելի մինչև 120 ներառյալ | 1.0 |
| | 120-ից ավելի մինչև 200 ներառյալ | 0.75 |
| | 200-ից ավելի մինչև 250 ներառյալ | 0.6 |
| | 250-ից ավելի մինչև 300 ներառյալ | 0.5 |
| | 300-ից ավելի մինչև 350 ներառյալ | 0.4 |
| | 350-ից ավելի | 0.25 |

## 17. ՕԲՅԵԿՏԻ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐ

33. Հեղինակային հսկողության մատուցվող ծառայության ծախսերը հաշվարկվում են օբյեկտի շինմոնտաժային աշխատանքների նախահաշվային արժեքից՝ ըստ 9-րդ աղյուսակում տրված տոկոսաչափի (բացառությամբ 10-րդ աղյուսակում նշված օբյեկտների):

Աղյուսակ 9

| Շինարարության տեսակը | Ծառայության մատուցման ծախսերի տոկոսաչափ (%) |
|---|---|
| Արտադրական նշանակության օբյեկտներ | 0.4 |



| | |
|---|---|
| Բնակարանային և քաղաքացիական նշանակության օբյեկտներ | 0.6 |

34. Պատմության և մշակույթի հուշարձանների վերականգնման, փոփոխման, ամրակայման, տեղափոխման ու վերանորոգման հեղինակային հսկողության ծառայության ծախսերի համար նախատեսվում են հետևյալ տոկոսաչափերը՝ ըստ 10 աղյուսակի:

Աղյուսակ 10

| Հ/հ | Օբյեկտի շինմոնտաժային աշխատանքների նախահաշվային արժեքը (մլն դրամ) | Ծառայության մատուցման ծախսերի տոկոսաչափ (%) |
|---|---|---|
| | մինչև 20.0 ներառյալ | 1.5 |
| | 20-ից ավելի մինչև 35 ներառյալ | 1.4 |
| | 35-ից ավելի մինչև 50 ներառյալ | 1.3 |
| | 50-ից ավելի մինչև 70 ներառյալ | 1.2 |
| | 70-ից ավելի մինչև 90 ներառյալ | 1.1 |
| | 90-ից ավելի մինչև 120 ներառյալ | 0.95 |
| | 120-ից ավելի մինչև 150 ներառյալ | 0.75 |
| | 150-ից ավելի մինչև 200 ներառյալ | 0.5 |
| | 200-ից ավելի մինչև 250 ներառյալ | 0.4 |
| | 250-ից ավելի մինչև 300 ներառյալ | 0.35 |
| | 300-ից ավելի մինչև 350 ներառյալ | 0.33 |
| | 350-ից ավելի | 0.3 |

## 18. ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԾԱԽՍԵՐ

35. Շինարարական աշխատանքների արժեքի նախնական հաշվարկները ձևակերպվում են համաձայն ձևի:

36. Կարգի ձևի 3-րդ (աշխատանքի անվանում) և 10-րդ (նյութի անվանում) սյունակներում անհրաժեշտ է տալ աշխատատեսակների, նյութերի տեսակների և չափերի վերաբերյալ մանրամասն նկարագրություն, որը նույնությամբ անհրաժեշտ է ընդգրկել մրցութային ծավալաթերթերում:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի ղեկավար Դ. Սարգսյան

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ

| NN | Հիմնա-կան/Կողմում | Աշխատանքի անվանումը | Շահի միավորը | Մեկ միավորի ընդհանուր արժեքը (հազ. դրամ) | Այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | | | Ընդհանուր արժեքը հազ. դրամ | Նյութերի արժեքը հազ. դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | աշխատանքի կարծը | | մեխ-ի շահագործման արժեքը | | նյութերի ծախսը և արժեքը 1 միավորի | | | | | | | | | | | | | |
| | | | | | ընդհանուր արժեքի | գործող մեքենաների | ընդհանուր արժեքի | գործող մեքենաների | անվանումը | հիմնադրամի տեղեկագրի համապատասխան գլխի և տողի համարները (հինգ ընդունելով տվյալ պահի դրությամբ վերջին անգամ հրապարակված հիմնադրամի տեղեկագիրը) | հատի միավորը | քանակը | արժեքը | ընդհանուր արժեքը | | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |



# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## 25 օգոստոսի 2011 թվականի N 1240-Ն

## ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 16-Ի N 938-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հաստատել բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 16-ի «Ուսանողներին մեկ բարձրագույն ուսումնական հաստատությունից մեկ ուրիշը փոխադրելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 14-ի N 1112-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 938-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2011 թ. սեպտեմբերի 2
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
օգոստոսի 25-ի N 1240 - Ն որոշման

# Կ Ա Ր Գ

# ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ

## I. ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

1. Սույն կարգի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ բուհեր) և հետբուհական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների վրա (այսուհետ՝ ուսումնական հաստատություններ)՝ անկախ ուսուցման ձևից (առկա, հեռակա, հեռավար), իրականացվող հիմնական կրթական ծրագրերից (բակալավր, մագիստրոս և հետազոտող) և մասնագիտություններից:

2. Ակադեմիական շարժունությունն ուսանելու, հետազոտություններ կատարելու կամ որակավորումը բարձրացնելու նպատակով մեկ այլ ուսումնական հաստատությունում սովորողի կրթության շարունակումն է:

3. Ըստ ուսման նպատակի կամ ժամանակահատվածի՝ սովորողների՝ բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրերով ուսումնառող, ակադեմիական շարժունությունը կարող է լինել որոշակի ժամկետով (այսուհետ՝ շարժունություն) կամ հիմնական (այսուհետ՝ տեղափոխություն):

## II. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

4. Սովորողների շարժունությունը չի հանգեցնում ուսման սահմանված ժամկետի ավելացմանը:

5. Ուսումնական հաստատությունների սովորողների շարժունության իրականացման եղանակներից է գործընկեր ուսումնական հաստատություններ, ինչպես նաև, սովորողի անհատական նախաձեռնությամբ, նրանց ուղարկելը՝

1) կրկնակի աստիճանաշնորհման կրթական ծրագրերի (երկու ավարտական փաստաթուղթ) շրջանակներում ուսանելու.

2) համատեղ աստիճանաշնորհման կրթական ծրագրերով (մեկ վկայականով) ուսանելու.



3) միջբուհական համագործակցության, այդ թվում՝ ակադեմիական փոխանակման ծրագրերի շրջանակներում ուսանելու.

4) վերապատրաստում (այդ թվում՝ լեզվական) անցնելու.

5) ուսումնական (հետազոտական, արտադրական) պրակտիկա անցնելու:

6. Հավակնորդների ընտրությունը կատարվում է մրցութային եղանակով՝ հաշվի առնելով նաև նրանց ակադեմիական առաջադիմությունը և ընդունող կողմի լեզվի (կամ օտար լեզվի) իմացությունը:

7. Շարժունության ծրագրին մասնակցելու նպատակով՝ սովորողի և ուղարկող ու ընդունող ուսումնական հաստատությունների միջև կնքվում է եռակողմ կրթական համաձայնագիր: Համաձայնագրում նշվում են այն առարկաները, որոնք սովորողները պետք է ուսանեն ընդունող ուսումնական հաստատությունում: Միաժամանակ նշվում են ակադեմիական տարբերությունների մարման ժամկետների վերաբերյալ սովորողի պարտավորությունները:

8. Շարժունության արդյունքում կրեդիտներով արտահայտված կրթական արդյունքները չպետք է գերազանցեն համապատասխան որակավորում ստանալու համար անհրաժեշտ ընդհանուր ուսումնական ծանրաբեռնվածության բակալավրի կրթական ծրագրի 25 տոկոսը, մագիստրոսի կրթական ծրագրի 50 տոկոսը և հետազոտողի կրթական ծրագրի 30 տոկոսը:

9. Ընդունող բուհում ուսուցման ժամկետի ավարտից հետո ուսանողն իր ուսումնասիրած առարկաների և պարապմունքների ցանկը, ինչպես նաև ստացած կրեդիտներն ու գնահատականները հաստատող ակադեմիական տեղեկանքը պետք է ներկայացնի բուհ՝ ակադեմիական ճանաչման մասին փաստաթուղթը նախապատրաստելու համար:

## III. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

10. Տեղափոխության մասին ուսանողների դիմումներն ընդունվում են համապատասխան ձևով ուսուցման կիսամյակների ուսումնական պարապմունքներին նախորդող և հաջորդող 2 շաբաթվա ընթացքում: Ուսանողը տեղափոխման մասին դիմումը ներկայացնում է իր ուսումնառության բուհի ռեկտորին՝ ակադեմիական տեղեկանք ստանալու համար: Բուհի կողմից ակադեմիական տեղեկանք տրամադրվում է 7 աշխատանքային օրվա ընթացքում:

11. Ուսանողի տեղափոխությունը թույլատրվում է, եթե տեղափոխման պահին ուսումնառած ծրագրի և ընդունող ծրագրի բովանդակությունների տարբերությամբ պայմանավորված՝ առարկայական տարբերությունների թիվը չի գերազանցում 20 կրեդիտը: Հակառակ պարագայում ուսանողին առաջարկվում է փոխադրվել ավելի ցածր կիսամյակում կամ այլ հարակից մասնագիտությամբ սովորելու, որի դեպքում առարկայական անհամապատասխանությունների նշված պահանջը բավարարվում է: Զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով բուհ ընդունված ուսանողների տեղափոխության դեպքում տրամադրված տարկետման իրավունքի փոփոխություն չի կատարվում:

12. Չի թույլատրվում բակալավրի կրթական ծրագրով առաջին և ավարտական կուրսերում ուսանողի տեղափոխությունը: Մագիստրոսի կրթական ծրագրով ուսումնառողների տեղափոխությունը թույլատրվում է առաջին կիսամյակի ավարտից հետո: Բուհերի հեռակա (առկա) բաժիններից առկա (հեռակա) բաժիններ տեղափոխումը թույլատրվում է առանց պարտադիր ժամկետային զինվորական ծառայության տարկետման իրավունքի, բուհի կողմից սահմանված կարգով:

13. Չի թույլատրվում նպատակային տեղերում ընդունված ուսանողների տեղափոխումն այլ բուհ կամ այլ մասնագիտությամբ ուսումնառության:

14. Հայաստանի Հանրապետության ռազմական բուհերի կուրսանտները, որոնց ուսումնառությունը դադարեցվել է զինվորական ծառայությունից առողջական վիճակով կամ ընտանեկան դրությամբ պայմանավորված՝ վաղաժամկետ արձակվելու պատճառով, ամբողջ ուսումնական տարվա ընթացքում կարող են հրամանագրվել՝ բուհերի համապատասխան կուրսերում ուսանելու համար:

15. Ուսանողի տեղափոխությունը թույլատրվում է տվյալ մասնագիտության գծով լիցենզիայով հատկացված ընդունելության սահմանային տեղերի (ըստ ուսուցման ձևերի և որակավորման աստիճանների) շրջանակում:

16. Օտարերկրյա բուհերից ուսանողների տեղափոխության դեպքում հանձնման ենթակա ստուգարքների և քննությունների թվի մեջ չեն ներառվում հայագիտական առարկաները: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ սովորողն օտարերկրյա բուհում, որպես մասնագիտական, ուսումնասիրել է հայագիտական առարկաներ, ինչպես նաև տեղափոխվող բուհում ընտրել է հայագիտական մասնագիտություններ:

17. Կրեդիտներով պայմանավորված առարկայական տարբերությունների ցանկը որոշում է ընդունող բուհը: Ուսանողը պետք է ուսումնառի և հանձնի գոյացած տարբերությունները՝ ընդունող բուհի կողմից սահմանված անհատական ժամանակացույցով, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ կիսամյակի քննաշրջանի սկիզբը:

18. Չի թույլատրվում ըստ մասնագիտությունների հավատարմագրված՝ կրթական ծրագրեր չունեցող ոչ պետական բուհերից ուսանողի տեղափոխությունը պետական կամ ըստ մասնագիտությունների հավատարմագրված՝ կրթական ծրագրեր ունեցող ոչ պետական բուհեր:

19. Պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված՝ կրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունները յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն (այսուհետ՝ նախարարություն) են ներկայացնում ուսանողների շարժունության բոլոր ձևերի մասին տեղեկատվություն՝ ըստ կրթական ծրագրի, ուսուցման ձևի, մասնագիտության և ուսուցման կուրսի տեղափոխման:



## IV. ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

20. Ուսանողի՝ բուհի ներսում տեղափոխությունը, որի ընթացքում կարող է անցում կատարվել մեկ մասնագիտությունից մյուսը կամ փոխվել ուսուցման ձևը (առկա, հեռակա, հեռավար), իրականացվում է բուհի ռեկտորի հրամանով, ուսանողի անձնական դիմումի համաձայն:

21. Ներբուհական տեղափոխությունները կատարվում են սույն կարգով սահմանված՝ ուսանողների տեղափոխության ընդհանուր պահանջներին համապատասխան:

## V. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՈՒՀԻՑ ԲՈՒՀ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

22. Ուսանողի՝ բուհից բուհ տեղափոխությունը, որի ընթացքում կարող է անցում կատարվել նույն մասնագիտությամբ, մեկ մասնագիտությունից մյուսը կամ փոխվել ուսուցման ձևը (առկա, հեռակա, հեռավար), իրականացվում է ընդունող բուհի ռեկտորին հասցեագրված՝ ուսանողի անձնական դիմումի համաձայն, որին կցվում է նաև սովորած բուհի կողմից տրամադրված ակադեմիական տեղեկանքը:

23. Եթե ընդունող բուհում տվյալ մասնագիտությամբ և կուրսում ազատ տեղերի թիվն ավելի քիչ է, քան տեղափոխվել ցանկացողների թիվը, ապա կազմակերպվում է ատեստավորում, և անցկացվում է մրցույթ, որի արդյունքում ընտրվում են այն ուսանողները, ովքեր շարունակելու են ուսումնառությունը: Ատեստավորման և մրցույթի անցկացման կարգն ու պայմանները սահմանում է ընդունող բուհը: Մինչև տեղափոխվողների կողմից առարկայական տարբերությունների հանձնումը՝ ընդունող բուհի ռեկտորն իրավասու է ուսանողին ժամանակավորապես հրամանագրելու համապատասխան ակադեմիական խմբում և նրան թույլատրել մասնակցելու ուսումնական պարապմունքներին: Հրամանում նշվում են նաև ակադեմիական առարկայական տարբերությունների ցանկը, դրանց մարման անհատական ժամանակացույցը, որի ավարտից հետո մեկ շաբաթվա ընթացքում տրվում է հրաման:

24. Տեղափոխվող ուսանողին ընդունող բուհը տալիս է սահմանված նմուշի տեղեկանք՝ համաձայն ձևի: Ուսանողը նշված տեղեկանքը ներկայացնում է իր սովորած բուհ, որի ռեկտորը եռօրյա ժամկետում տալիս է ազատման մասին հրաման՝ հետևյալ ձևակերպմամբ՝ «Ուսանող _____ - ը ազատված է՝ _____ բուհ տեղափոխման կապակցությամբ»: Ուսանողին առձեռն տրվում կամ փոստով առաքվում են ազատման մասին հրամանի պատճենը, սահմանված նմուշի ակադեմիական տեղեկանքը, միջնակարգ կրթության ավարտական վկայականը, անձնական գործի փաստաթղթերը և ընդունելության քննություններին առնչվող փաստաթղթերը: Ուսանողի անձնական գործում մնում են ազատման մասին հրամանի և բուհի կողմից հաստատված միջնակարգ կրթության ավարտական վկայականի պատճենները, ուսանողական տոմսը, ստուգման գրքույկը և ուղարկված փաստաթղթերի ցանկը:

25. Տեղափոխվող ուսանողի հրամանագրումը կատարում է ընդունող բուհի ռեկտորը՝ ուսանողի դիմումը, միջնակարգ կրթության ավարտական վկայականը և ակադեմիական տեղեկանքն ստանալուց հետո (մինչև այդ ստուգվում է ակադեմիական տեղեկանքի և ստուգման գրքույկի պատճենի համապատասխանությունը): Տեղափոխության մասին հրամանում կատարվում է հետևյալ գրառումը՝ «_____ -ին _____ բուհից տեղափոխման կարգով ընդունել _____ ֆակուլտետի _____ մասնագիտության _____ կուրս՝ _____ ուսուցման ձևով, վճարովի (անվճար) սկզբունքով»: Ընդունող բուհում կազմվում է ուսանողի նոր անձնական գործ: Ուսանողին տրվում են նոր ուսանողական տոմս և ստուգման գրքույկ:

26. Հեռակա ուսուցումից առկա ուսուցման տեղափոխությունները կատարվում են սույն կարգի պահանջներին և կարգի 10-13-րդ կետերով սահմանված դրույթներին համապատասխան: Առարկայական տարբերությունները հանձնելու համար սահմանվում է անհատական ժամանակացույց, որի ժամկետը չպետք է գերազանցի տվյալ կիսամյակի առկա ուսուցման համար սահմանված ժամկետը:

## VI. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲՈՒՀԵՐԻՑ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՈՒՀԵՐ

27. Օտարերկրյա պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված՝ կրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններից Հայաստանի Հանրապետության բուհեր ուսանողների տեղափոխությունն իրականացվում է վճարովի ուսուցման սկզբունքով: Օտարերկրյա բուհ միջպետական համաձայնագրերով ուսման գործուղված և առողջական վիճակի կամ ուսման գործընթացը խոչընդոտող այլ անհաղթահարելի հանգամանքների պատճառով Հայաստանի Հանրապետություն վերադարձող ուսանողները, ընդունող բուհի ռեկտորի առաջարկությամբ և նախարարության համաձայնությամբ, ուսուցումը կարող են շարունակել անվճար սկզբունքով:

28. Ընդունող բուհը դրական կարծիքի դեպքում նախարարություն է ներկայացնում ուսանողի ակադեմիական տեղեկանքը: Տեղափոխության մասին որոշումն ընդունում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարը՝ համապատասխան օտարերկրյա բուհից գրավոր հարցման դրական պատասխան ստանալուց հետո:

29. Ուսանողի տեղափոխությունն իրականացվում է սույն կարգի 10-12-րդ, 23-26-րդ և 28-րդ կետերով սահմանված դրույթներին համապատասխան: Եթե ուսանողի անձնական գործն առաքման ենթակա չէ, ապա դրա մասին ընդունող բուհին հղվում է համապատասխան փաստաթուղթ, իսկ ուսանողի հրամանագրումը կատարվում է նրա դիմումի և ակադեմիական տեղեկանքի հիման վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ



ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՁԵ

Ընդունող բուհի անկյունային կնիքը,
ամսաթիվը, գրանցման համարը
(կամ բուհի ձևաթուղթը)

## ՏԵՂԵԿԱՆՔ

Տրվում է _____ -ին՝ այն մասին, որ
(անունը, հայրանունը, ազգանունը՝ լրիվ)

նրան _____ կողմից տրված _____
(բուհի լրիվ անվանումը) (ստուգման գրքույկի գրանցման

_____ ստուգման գրքույկի պատճենի և դիմումի համաձայն
թիվը և ամսաթիվը)

թույլատրվել էր մասնակցել ատեստավորման գործընթացին, որը նա հաջողությամբ անցել է:

_____ -ը կհրամանագրվի _____
(անունը, հայրանունը, ազգանունը)

_____ ուսուցման
(ընդունող բուհի և ֆակուլտետի լրիվ անվանումները, առկա, հեռակա, հեռավար)

_____ կուրս՝ _____մասնագիտության գծով,
(մասնագիտության լրիվ անվանումը)

_____ սկզբունքով, ակադեմիական տեղեկանքը և միջնակարգ
(անվճար, վճարովի)

կրթության ավարտական վկայականը ներկայացնելուց հետո:

Ռեկտոր _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ. Տ. 20 թ. _____

_____

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
8 օգոստոսի 2011 թ.
*Պետական գրանցման թիվ 11711382*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

**27 հուլիսի 2011 թ. N 126-Ն**

**ՀՐԱՄԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-Ի N 24-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10.1 հոդվածի, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի փետրվարի 20-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությանը քաղաքաշինության բնագավառում կառավարման պետական լիազորված մարմնի իրավասություն վերապահելու մասին» թիվ 156-Ն որոշման համաձայն.

*ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ՝*

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի «ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերը հաստատելու մասին» N 24-Ն հրամանում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) հրամանով հաստատված ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերի 6.4.3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

,6.4.3 Տատանման i-րդ ձևով k-րդ հարկի մաքսիմալ տեղափոխությունը Xki և կից հարկերի Δki շեղվածքների մեծությունները որոշվում են հետևյալ բանաձևերով՝

Xki = 0,8A gk0 ηik βi (Ti/2π)2

Δki = Xk+1i - Xki ե (6)

Նախարար՝ Վ. Վարդանյան